գործիչներից մէկին՝ Խան Թեքինսկիին՝ պաշտօն տալով նրան՝ Հայաստանի ներսում մահմեդական խռովութիւններ կազմակերպելու*)։

Խան Թեքինսկին Երևան հասաւ մարտ ամսի քսաններին։ 22-ին նա այցելեց Էջմիածին կաթուղիկոսին, և ահա թէ ինչ է հեռագրում իր կառավարութեան. «Նա (կաթուղիկոսը) չեշտեց հայերի և մահմեդականների բարեկամութեան անհրաժեշտութիւնը և խոստացաւ կոչ ուղղել հայ ժողովրդին՝ հաշտ ապրել մահմեդականների հետ։ Կաթուղիկոսը ինձ պահեց ճաշի և մինչև վերջին րոպէն չհեռացաւ ինձնից։ Նաւթ չլինելու պատճառով Էջմիածին վանքն ու կաթուղիկոսարանը զրկւած են ելեկտրական լոյսից։ Ես խոստացայ մեքենաների համար նաւթ տալ, ուստի խնդրում եմ շուտով տակառներով նաւթ ուղարկէք կաթուղիկոսի համար»։ Ու նոյն հեռագրում, ծածկագրով, աւելացնում է. «Ուղարկեցէ՛ք միայն 200 փութ նաւթ. աւելին կարող է կառավարութիւնը օգտագործել... Մարտ 14-ին Հայաստանը Թիֆլիսից ստացաւ 14 միլիոն բոն, բայց եթէ զրամական տեսակէտից դժւարութիւններ հանէք, շուտով կընկնի ծանր դրութեան մէջ։ Հացի բացակայութեան պատճառով Հայաստանը չի կարող ապրել ինքնուրոյն կեանքով։ Հնդիկ զինուորները ուղևորւեցին դէպի Նախիջևան։ Եթէ անհրաժեշտ դտնէք, կարսի կառավարութեան հետ կապ կը հաստատեմ»։

Ուրեմն, առաջին իսկ քայլից, հարևան «քոյր հանրապետութեան» ներկայացուցիչը «դժւարութիւններ հանելու» մասին է մտածում։

Ապրիլ 10-ին Թեքինսկին մանրամասն տեղեկութիւններ է հեռագրում Բաքու հայկական բանակի մասին, իսկ ապր. 16-ին, թէ՝ «Լուրերի համաձայն անգլիացիք Կարսը յանձնել են հայերին. պատրաստւում են յանձնել նաև Շարուր—Նախիջևանը։ Խնդրում եմ ստուգել և հարցնել անգլիացիներին. եթէ ճիշտ է, կարծում եմ, անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աւղանիստանի, Մալայեան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականութեան, նոյնպէս և Հաշտութեան Վեհաժողովին ընդդէմ անգլիացիների այն ցանկութեան, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թւով կէս միլիոն հայերին»։

Ապա, մի շարք հեռագիրներով, հաղորդում է Նախիջևանի դրաման նախապատրաստական աշխատանքների մանրամասնութիւնները և ապրիլ 29-ին № 72 հեռագրով շտապ հարցնում է. «Եթէ Նախիջևանը դիմադրութիւն ցոյց տայ հայկական զօրքերին, կառավարութիւնը ի՞նչ օգնութիւն կը հասցնէ և զօրքեր կուղարկէ՞, թէկուզ կամաւորների անուան տակ»։

Ապր. 30-ին, հետները մեծ դումարներով, Երևան են հասնում Ազրբէջանի դործակալներ Նախիջևանսկին և Մակինսկին՝ Նախիջևան դնալու համար։ «Զօր. Թոմսընը Երևանում, հեռագրում է մայիս 1-ին Թեքինսկին, արդելեց Մակինսկիին անցնել Նախիջևան՝ այն պատճառաբանութեամբ, թէ այդ շրջանը դտնւում է Հայաստանի կառավարութեան վարչութեան ներքոյ։ Մակինսկին դրամները յանձնեց ինձ. սպասում եմ ցուցմունքների, թէ

*) Խան Թեքինսկիի Երևան հասնելու առաջին իսկ օրից Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ծանօթ էր նրա ծածկագրին. Խան Թեքինսկիի ուղարկած և ստացած բոլոր հեռագիրները, նախ քան իրեն հասնելը, յայտնի էին դառնում Հայաստանի կառավարութեան։ 1920թ. մայիսին, Ազրբէջանի խորհրդայնացումից յետոյ, այդ հեռագրները հրատարակեցին առանձին գրքոյկով — «Գաղտնի Փաստաթղթեր» (Ազրբէջանի դաւադրական գործունէութեան մի էջ), 1920թ. Երևան, հրատ. «Ռազմիկ»-ի։